ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՄԱՍՆԱՒՈՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
« ՊԱՀՊԱՆԸ »

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

(Շարունակութիւն անցեալ)

Ե

Հայկական հարցը ամենէն աւելի տեղ կը գտնէ իր համար Եւրոպական Թուրքիոյ մէջ ի նկատի առնելով ոչ միայն հոն ապրող հայ ազգաբնակչութեան մեծ մասը, այլ նաեւ հոն ունեցած անոր պատմական մեծ նշանակութիւնը։ Ամէն ինչէ առաջ հարկ է ուրեմն ծանօթանալ Եւրոպական Թուրքիոյ հայ ազգաբնակչութեան թուային ներկայ վիճակին։

Ըստ 1878 թուականի Պերլինի դաշնագրին, Եւրոպական Թուրքիոյ հայ ազգաբնակչութիւնը կը կազմէ 2,000,000 հոգի։ Ասոնց 1,000,000 հոգին կը բնակի Ռումելիոյ մէջ, 500,000 հոգին Կ. Պոլսոյ մէջ եւ 500,000 հոգին ալ Անատոլուի մէջ։

Ռումելիոյ հայ ազգաբնակչութիւնը կը բաղկանայ գլխաւորապէս Ադրիանուպոլսոյ, Սելիւրիոյ, Ռոտոսթոյի, Վարնայի, Սոֆիոյ, Փիլիպէի, Սալոնիկի, Սերէզի, Սէրէսի, Տրամայի, Ուսքիւպի, Մոնաստիրի, Ռուսչուքի, Սիլիստրիոյ, Ռասկրատի, Ֆիլիպէ Ճամիի, Ֆիլիպէ Վաքըֆի, Ֆիլիպէ Փազարճըքի, Ֆիլիպէ Ֆաքրիի, Ֆիլիպէ Ֆաքրիի, Ֆիլիպէ Ֆաքրի

կաց կարծիքը ջերմ հրաւէրների է կարօտ՝ հետաքրքրութեան այն ողբերգութեամբ, որը կատարուած է փոքր-Ասիայում։ «Միութեան» գրամարկղը ինչպէս միշտ, պատրաստ է նիւթապէս օգնելու գործին, և ուրեմն Գերմանիայի մեր ընկերները՝ առանց դժուարութեան՝ կարող են ձեռնարկել կօնֆէրանսների կազմութեան։

Հայ ուսանողութիւնը ունի կատարելու բարոյական մի այլ պարտք. Ցասունի ապստամբութեան տասնամեակն է։ Ժողովները կազմենք, ծիչենք քայլարի լեռնականների ցաւերն ու վէրքերը և անենք ու տանք, ինչ կարող ենք։

---

1) Լոյս տեսաւ «Հայաստանի քարտէզը», հայատառ, գեղեցիկ կազմով, գինը մի ֆրանկ։ Այդ ծայրայեղ էժանութեան նպատակն է՝ միջոց տալ, որ ամէն մի գրագէտ հայ, ամէն մի ընտանիք ձեռք բերի քարտէզը — հայրենագիտութեան այդ անհրաժեշտ միջոցը։ Քարտէզը մուտք գտաւ եւ Ռուսաստան։

2) «Միութեան» հայերէն և օտար լեզուներով արած հրատարակութիւնները՝ 1) Ազատութեան երգեր, 2) Ապստամբ Ցասունը, 3) Հայրենասէրի տաղերը, 4) Հայուհիներին, 5) Հերոսը, 6) Լեռան ռազմիկը, 7) Մարկ Բոցարիս, 8) Հայկական բէֆօրմների ծրագիրը, 9) Բերնշտայնի Les souffrances du Peuple arménien et le devoir de l'Europe, 10) Վանդալի Les Arméniens et la Réforme de la Turquie, 11) Պրէսանսէի L'Arménie et la Macédoine, 12) Բրանդեսի L'Arménie et l'Europe, 13) Sassoun, 14) Բերնշտայնի Die Leiden des armenischen Volkes und die Pflichten Europas, 15) Դը կօնստան, Գօյէն, Պրէսանսէ, Ժօռէս, Լբռօլ, Լբրուա Բօլիօ Für Armenien und Macedonien, 16) Բրանդեսի Armenien und Europa 17) Ֆրապանի Die armenische Frage և 18) Ցասունի քարտէզը (ֆրանսերէն) տարածւում են, պրօպագանդի համար, ձրիաբար։ Ցեղափոխական կազմակերպութիւնները կարող են ստանալ այդ հրատարակութիւնները ձրի, և վաճառելով՝ արդիւնքը մտցնել իրենց դրամարկղի մէջ, յօգուտ հայկական դատի։

3) Խնդրում ենք ձեռնհաս ընկերներին՝ ձեռնարկել յեղափոխական գրքոյկների թարգմանութեան։ Ցանկացողներին տրւում է հօնօրար։

4) Պատրաստւում է Կիլիկիայի եւ Հայկական նահանգների մանրամասն քարտէզը, լատիներէն գրերով։

5) Համագումարը տեղի կունենայ ապրիլի 1ին։ Հրաւիրում ենք ուսանողական մարմիններին՝ վաղօրօք անդամագրել բոլոր ընկերներին, ուղարկել մեզ ցուցակներն ու անդամավճարները և պատրաստել մանրամասները կը յայտարարուին ժամանակին։

Ընկերական բարևներով

ԼԻԱԶՕՐ ԿՕՄԻՏԷ

1905, յունուար 10 Ժրնեվ

Adresse: Union des Etudiants arméniens de l'Europe, rue de l'Ecole de-Chimie, 2, Genève.

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

Եգիպտահայ մամուլին մէջ, Գահիրէի Դաշնակցական կոմիտէի մէկ թռուցիկին առթով բաւական խնդիրներ յուզուեցան թեր ու դէմ, որոց Ամերիկահայ մամուլից անգամ արձագանքներ տին։

Գահիրէ հրատարակուղ «Ժողովուրդ» որ առաջինն մատնանիշ ըրաւ այդ անհեթեթութիւններ, բազմաթիւ գրութիւններ ստացած է ամեն նուստ (տես Ժողովուրդ թիւ 17–19). բոլորն էլ նմանօրինակ գործունէութիւններից հասկանալի դիւրազգածութեամբ մը իրենց հայրենասիրական զգացումների մէջ վիրաւորուած, չատերի պէս այդ կուսակցութեան կը վերագրեն մեր վերջին չարդերի պատասխանատուութիւնները։

«Ժողովուրդ»ի ցիար խմբագիրն այդ առթով հետաքրքրաշարժ հարց մը դրած է. յարելով որ ա՛լ բաւ եւ անօգուտ է առայժմ պատասխանատուութիւններ փնտռել, կառաջարկէ մեր ներկայ փափուկ կացութիւնից նուազագոյն զոհողութեամբ մը լաւագոյն վիճակ մը կարենալ ձեռք բերելու մեթոտներ փնտռել և հրապարակել։

Հարցը կարևոր է և կարժէ զբաղուել անով։

Պատասխանատուութիւնների համար ես կը խորհիմ թէ, ընդհակառակն, այդ կէտը լուսաբանել կարևոր է. ատոր անաչառ քննութիւնը միւսին չի արգիլեր։ Մինչև որ մեր ազգի ժամիկ անցեալի և ներկայ կացութեան ճշգրիտ պատճառն ու պատասխանատուութիւնները չի ճշդուին, յառաջիկային դարման գտնել և գործադրելն եթէ ոչ անկարելի, գէթ դժուարին և թերակատար պիտի լինի։

— Ո՛վքեր են արդեօք մեր արիւնոտ կացութեան պատասխանատուները. կամ աւելի ճիշտ՝ ովքե՞ր են մեր վերածնութեան դատի թշնամիները և յապաղեցնողները։

Ներքին պատճառներից պիտի յարենք անչուշտ, օրինակի համար, անցեալին մէջ կարմիր-հնչակն էր և ներկայիս մէջ ճերմակ դրօշակը։ Լ՛ա՛։

Արտաքինների մէջ բնականաբար առաջին տեղը Մեծ-Մարդասպանի կառավարութիւնը կը բռնէ, իր կըռնակն ունենալով անմիջապէս հայակուլ Ռուսիան և Գերմանիան։

Ասոնք ճշմարտութիւններ են. բայց արդարութիւնը կը պահանջէ որ այդ պատասխանատուութիւններից կէսրիկ բաժին մ'էլ ուրիշներին յատկացնենք։ Տեսէ՛ք։

Երբ Աւլդան, Ցար կամ վիլհելմ աչքերնուս առաջ կը բերենք, սըրտերնիս բնաւ բարի բան մը չի անցնիր, ցուրտ և մահառիթ սարսուռից զատ։ Այսպէս չէ՞։ Եւ ասիկա գէթ անոնց եթէ ոչ արդարացումը, գոնէ անոնցից անսպասելի բան մը կրնայ չհամարուիլ։ Այնքա՛ն էլ գիտենք որ անոնք ատկից զատ ուրիշ յայտնի շնորհք չունին։

Բայց ի՞նչ կասէք, օրինակի համար, ֆրանսական ազատ հանրապետութեան, Ալպիոնի ազատական թագաւորութեան համար, քաղաքակրթութեան այդ երկու վիթխարի ռահվիրաներին, որոնք Լուսաւորութեան, Արդարութեան և Հաւասարութեան սկզբունքներ պարզած կը պոռան կը կանչեն ականջները խլացնելու, միամիտ սրտեր յափշտակելու չափ. Ու... բան մը չեն ըներ և կամ, աւելի ճիշտ, միւսներին պէս բան մը կընեն։

Լսեցիք անչուշտ հայասէր Տէլքասէին պաշտօնական յայտարարութիւնը ֆրանսական խորհրդարանի բեմից, որ բացարձակօրէն կը հաստատէր թիւրք բռնապետութեան ըժիմին հետևանքով հայերի ապստամբութեան իրաւունքը։ Դեռ նորերս նմանօրինակ պաշտօնական տեղեկագիրներ կարդացինք անգլիական կառավարութենէն հայկական խնդրի մասին հրատարակուած ճերմակ տետրակին մէջ։

Ահա երկու մեծ, զօրաւոր և բարեացակամ կառավարութիւններ որոնք կը խոստովանին ու չեն ծածկեր մեր դառն վիճակ եւ մեր պահանջների արդարութիւնը (բան մը որ, թողունք մարդկիկ, սատանաներն անգամ և նոյն իսկ Թիւրքիա ու Ռուսիա աղէկ գիտեն, թէև չուզեն խոստովանիլ)։

— Բայց ատոնք մեզ համար ի՞նչ ըրին որ չուզեցին անել մեր հակառակորդ պետութիւնները։ — Ոչինչ։— Եւ այդ մեզ համար բացասական ոչինչը, դժբաղդաբար Թուրքերի համար դրական քաղաքագրութիւն մը եղաւ ցարդ։

Ահա՛ կարևոր կէտ մը ըմբռնելիք, որից դեռ շատ գասեր կրնանք քաղել, զի մեր գործունէութեան հունձք դեռ վերջացած չէ։

Այսպէս էլ՝ ինչպէս ասինք՝ մեր անցեալ կոտորածների մէջ Հնչակեան տխուր դերը փայլեցաւ, որ անզէն և անպատրաստ ժողովուրդը ոչխարի նման 100,000ներով ոսկեզօծ-կարմիր «Հնչակ» և «Ապտակ»ներից մոլեգնած Թուրքի սրերի բերան քշեց և այսօր միևնոյն դերը Դաշնակցութիւնն է որ (թէև պէտք է խոստովանել թէ «Հնչակ»ից աւելի կազմակերպական հայդուկային ոյժերով) կը գործադրէ։ Ու առաջին և երկրորդ պարագային մէջ, ինչպէս կը տեսնենք, միշտ նոյն անպատրաստ ժողովուրդն է որ կը տուժէ։

Ահա երկրորդ կարևոր կէտը որ կարժէ լաւ ըմբռնել։

Անչուշտ ատոնք ամենքը, որքան էլ զիրենք ձիւնի նման ճերմակ երեսս ցոյց տան, պատասխանատուութեան մը բաժին կը կրեն իրենց վրայ, որից պիտի չը կրնան ճողոքուիլ։ Ապագայ պատմութիւն ան-կաշկանդ և անողոք, աւելի խիստ պիտի լինի իրենց նկատմամբ։

Բայց... բայց կը մնայ անդիմադրելի մեծագոյն պատասխանատուն, որ մենք էլ ծածկել և անգիտել կը ձգտենք, Թուրքից, Ռուսից, կուսակցութիւններից էլ դէն. եւ ատոր համար էր որ կուզէի խօսել և ծանրանալ և ատիկայ էր որ կը ցանկայի մենից աւելի լաւ ըմբռնուէր։

— Ատի մեր Հայ Ժողովուրդն է։ —

Իր գլխին եկած այս բոլոր չարիքների, իր ազատութեան յապաղումի մեծագոյն պատասխանատուն նա է։ Միսներն իր զանցառութիւնների և թերութիւնների հետևանքներ են։

Ցաւալի է սա, որքան և ատոնք գին մեզ համար զոյն ցուցնելը. բայ ափսո՛ս որ ճշմարտութիւն է։ Լաւ զոյն բժիշկ յաճախ անիկա չէ որ իհիւանդին կրծող մահացու ախտը ծածկէ՝ գինք վայրկենական ցաւի չի մատնելու հոգածութեամբ, քաւոր և հատու գործիքը ձեռքին դրդռելի և պաղ վիրահատը։ Այս խուր բայց էական պաշտօնը Ռուսիահան կատարած է միշտ ինքնաբերաբար և գիտակցօրէն, ժողովուրդն հաճելի լինելուց աւելի անոր օգտակար լինելու առաջադրութեամբ (որ իր քսանամեայ սրտմաշուք կեանքը կապացուցանէ)։ Ու մենք կը ըրենք նորէն, որ ժողովուրդին իր ճակին անտարբերութիւնը, անպատրաստ լինելը և իր փրկութեան գլխաւոր գործին մեծութեան պահանջած զոհողութիւնները օգտակար կերպով գործածելու տգիտութիւնն է։ գինք դէպքերի եւ քմահաճոյքների խաղալիք դարձուցած, կը մաշէ, կը հեծէ...

Այսպէս, քանի որ հայ հասարակութիւն ինքն իր վիճակին անգիտակից մնայ, քանի որ նա ապստամբութեամբ իր կացութիւն փոփոխելը՝ անհրաժեշտութիւնը չզմբռնէ, չպատրաստուի և զոհողութիւններ չտանէ, սպասելով որ Եւրոպան մարդասէր պետութիւններ և այս ու այն փոքրաթիւ և հետևաբար այս մարդի պահանջին հաւասարութեամբ չա՛տ տկար հայդուկային խումբեր իրեն համար աշխատին եւ ազատութիւն մը պատրաստեն և մանուկին բերին կաղանդի նուէր մը անելու պէս իրեն անակնկալ մը անեն, ատոր փարէն մահ, արիւն, աւեր, կրակ անպատուութիւն միայն պիտի վիճակուին իրեն։

Մինչև որ ժողովուրդն ինք չուզէ (ուզել բառը հոս խնդրին համեմատ իր ամենալայն ըմբռնումով ընդունելով), իրեն ազատում չկայ։ Թերևս Աւետարանի «Խնդրեցէք և ասցի ձեզ» խօսքը բաղխեցէք և բացցի ձեզ» խօսքը երբէք աւելի իրեն արժանի տեղ չէ գտած, այնքան որ մեր մէջ հա-

տատ պահանջի մը արդիւնք եղող կամեցողութիւնը պակասած, մեռած էր։

Թուրք և Ռուս իրենց դժոխածին մահափիւռ գործը պիտի չարունակեն, ինչպէս և եւրոպական միւս կառավարութիւնները իրենց պղատոնական համակրութիւն մեզի և դրական աջակցութիւն անոնց, և մեր յեղափոխական հայդուկային խումբերն էլ կամայ և ակամայ պիտի գան ու երթան, ու մենք մեծաքանակ թէ փոքրաքանակ պիտի ջարդուինք, բռնաբարուինք և ոչնչանանք ինչպէս երէկ, այսօր և թերևս վաղը . . ., եթէ մեզ քանց վրին միայն փաթըթած, սպասինք և յուսանք։

Վերջապէս ժամանակն է ու ուշացած ալ է, որ ժողովուրդը հասկնայ ու ճանրութիւն. անկից խուսափելու համար սթափի իր թմրած կացութիւնից, միամիտ յոյսերից և ամէն բան ասկից անկից սպասելու, մուրալու ունակութիւնից, հասկնայ վերջապէս որ ինքն էլ պարտքեր ունի իրեն նկատմամբ, պարտքերի մեծագոյնը, բոլոր ուրիշներից սպասածները. առանց որոց իր փրկութեան և ազատութեան գաղափարը լոկ ցնորք մը և երազ մը պիտի մնայ, իր արիւնից կազմուած ծովին մէջ խեղդուելով։

Եւրոպական աջակցութիւն հարկաւոր է, մեր խումբերի գործունէութիւնները նոյնպէս. բայց միայն յարմար ժամանակին, իսկ այդ յարմար ժամանակը ժողովրդեան իրեն կը մնայ պատրաստել և երևան հանել . . .

Եւ որքան չուտ, այնքան լաւ։
Ասիկայ իմ մաղթանքս է։ Ձ՚ըրը։

ՄԷՆ-ՄԷ

ՀԱՑԵՐ Ի ՌՈՒՍԻԱ

Ս. Էջմիածնի Սինոդի սեպտեմբեր ամսի (Հ. Տ.) օրագրութիւններէն կը քաղենք հետեւեալները.

«Սեպտ. 27ին Սինոդը ի նկատ ունենալով որ նորահաստատ անգամները՝ Յովհաննէս եպ. Շիրակունին եւ Յուսիկ, Մատթէոս և Բաբկէն վարդապետները իրենց պաշտօնավարութեան սկզբում կոնսիստորիաներում եւ Հոգևոր կառավարութեանց մէջ արդէն երդուել են հաւատարիմ ծառայութեան համար և ուշադրութեան առնելով Պ. Պրօկուրօրի գրութիւնն այդ մասին, որոշեց հրաւիրել յիշեալ անգամներին պաշտօնավարութեան՝ առանց երդումը կրկնելու, միանգամայն աւելորդ համարելով այն։

— Որովհետև Գանձակի Պ. Նահանգապետը համաձայնութիւն չտուաւ վարդան Խանդալեանցին Նիժի վրայ քահանայ ձեռնադրելու, ուստի Սինոդը որոշեց մերժել նրա ձեռնադրութեան գործը։

— Գերմանիոյ արտաքին գործոց նախարարութիւնը հարց է յարուցել թէ ինչ եղանակով են վկայական տալիս Ռուսաստանում ամուսնանալ ցանկացողներին։ Ռուսիոյ կառավարութիւնը համաձայն գործող օրինաց հաղորդել է որ արգելք չունեցող ամուսնական հարցի վճռադատութիւնը վերապահուած է ամուսնացող անձի դաւանութեան ծխատէր քահանային. իսկ կաթոլիկների վերաբերութեամբ — ոստիկանական վարչութեան։ Ուստի և արտասահմանում օտարազգեան հետ ամուսնանալ ցանկացողի վկայականը, բաց ի կաթոլիկներից, պէտք է տալ այն քահանային, որի ծուխն է եղել արտասահմանում ամուսնանալ ցանկացողը՝ այնտեղ գնալուց առաջ. հետևապէս քահանայք, երբ որևէ արգելք չկայ ամուսնանալու, պարտաւոր են տալ խնդրուած վկայականները։ Երկրորդ, որովհետև ամուսնութիւնը Ռուսաստանում օրինաւոր է ճանաչուում այն դէպքում, երբ նա կատարուած է այն դաւանութեան համեմատ, որին որ պատկանում են ամուսնացողները, այդ պատճառով նա պարտաւոր է ցոյց տալ այն անձի դաւանութիւնը, որի հետ որ ցանկանում է ամուսնանալ. իսկ այն անձինք, որոնք վկայական են տալիս, պարտաւոր են նախազգուշացնել և յայտնել որ Ռուսաստանում ամուսնութիւնը օրինաւոր կը համարուի միմիայն այն ժամանակ, երբ նա կատարուած կը լինի ամուսնացողների դաւանութեան համեմատ։ Սինոդը որոշեց ներքին գործոց նախարարի գրութեան պատճէնները ուղարկել կոնսիստորիաներին ի հրահանգութիւն։»

ՀԱՑԵՐ Ի ԹԻՒՐՔԻԱ

Աւստրալիաէն կ. պոլիս հասած Անգլիացի եկեղեցական մը, վեր. Քէնըն Շուպրիճ, Հայաստանեայց եկեղեցիի արարողութիւնները տեսնելու փափաք յայտնած լինելով, յունուար 1/14ի չաբաթ առաւօտ գնացեր է Պատրիարքարանի Մայր-եկեղեցին, ընկերակցութեամբ Անգլիացի ծանօթ փաստաբան Տ. Էդուին Բիրսի և Ղալաթիայի Մէմորիըլ Զըրչի երէց վեր. Սուօպիի։ Երեք այցելուներին կառաջնորդեր Տ. Լևոն Քիրիչճեան անգլիագէտ հրապարակագիրը որ պատարագի ժամանակ իրենց բացատրեց Հայաստանեայց եկեղեցիի խորհուրդներն ու ծէսերը որոնց կուշտ կնդրէին մեծ հետաքրքրութեամբ։ Հաղորդութեան ժամանակ Ս. Պատրիարք Հայրը մաս բաժնեց Անգլիացի հիւրերին։ Օրտաւուչ երգեցողութիւնները խորունկ տպաւորութիւն թողուցին այցելուներուն վրայ և վեր. Շուպրիճ յայտարարեց թէ շատ կանոնաւոր գտած էր Հայաստանեայց եկեղեցիի արարողութիւնները։ Ժամերգութեան աւարտումէն յետոյ, Ս. Պատրիարքը պատրիարքարանին մէջ ընդունեց հիւրերը և շատ սիրալիր տեսակցութիւն մը կատարուեցաւ Ս. Պատրիարքը կը խօսէր ֆրանսերէն, որը անգլիերէնի կը թարգմաներ Տ. Լևոն Քիրիչճեան, որովհետև թէեւ միւս հիւրերը ֆրանսերէն կը հասկընային, վեր. Շուպրիճ անգլիերէն միայն կը հասկնար։ Սրախօսութիւններով և կատակներով համեմուած այս խօսակցութեան միջոցին, Ս. Պատրիարք Հայրը բացատրեց Հայաստանեայց եկեղեցիի հաստատման պարագաները, Թադէոս եւ Բարթուղիմէոս առաքեալներին Հայաստանի մէջ կատարած գերը պատմեց և շեշտեց սա կէտը թէ Հայաստանեայց եկեղեցին քրիստոնէական ամէնէն հին եկեղեցիներէ մին է և շատ լայնախոհ։ Այս խօսակցութեան պահուն, սրահը մտան Մայր-եկեղեցիի քահանայական դասը, դպիրները հալն, որոնք նոր Տարին շնորհաւորելով մէկ մէկ Օրացոյց ստացան. այս առթով Ս. Պատրիարք Հայրը յիշատակի համար մէկ մէկ թաւշապատ փառակազմ Օրացոյց ալ նուիրեց Անգլիացի հիւրերին որոնք հետաքրքրութեամբ կը դիտէին այս շնորհաւորական արարողութիւնները։ Պատշաճ պատիւներէն վերջ, հիւրերն առաջնորդուեցան պատրիարքարանի դահլիճն, ուր դարձեալ չահեկան խօսակցութիւններ տեղի ունեցան պատրիարքների պատկերների հաւաքածոյին առթիվ։

Վերապատուելի Քէնըն Շուպրիճ իր կողմէ տեղեկութիւններ տուաւ Աւստրալիոյ վրայ, ուր, ըստ, հանդիպած է պարկեշտ Հայ վաճառականների. բայց Հայ եկեղեցական չէր տեսած։ Այս առթիվ Ս. Պատրիարքը տեղեկութիւններ տուաւ արտասահմանի Հայերի եկեղեցիներին վրայ ալ փոխադարձ սիրալիր ողջագուրումներէ վերջ, հիւրերը մեկնեցան գոհ տպաւորութեան տակ, կրկին եւ կրկին յայտարարելով թէ Հայաստանեայց եկեղեցիի պատմութիւնն ու արարողութիւնները շատ լաւ տպաւորութիւն ըրած են իրենց վրայ։ Վեր. Շուպրիճ քիչ օրէն կը մեկնի կ. պոլէն, Աւստրալիա վերադառնալու համար, ինք Աւստրալիոյ անգլիական գաղութի չորս գլխաւոր վերապատուելիներէ մին է, որոնց հսկողութեան տակ կը գործէ 60 կղերականներէ բաղկացած կրօնական մարմինը։

— Ամէն . Պատրիարքի կողմէն պատրիարքարանի գործակատար Ա. Բիւրէֆ Ֆէնճեան գնացեր չնորհաւորական այցելութիւն տուեր է Խարբերդի (Մամուրէդ-իւլ-Ազիզ) նորընտիր կուսակալ Ֆէհմի պէյին։

— Սամսոնի Գաւառային ժողովին և ժողովուրդին միչև ծագած անհամաձայնութեան պատճառով գաղթեր է Սամսոնի նոր եկեղեցիի շինութիւնը։

ԿԻՊՐՈՍԻ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒՐ

Կիպրոսի հոգևոր հովիւ Արժ Տ. Պետրոս Վ. Սարաճեան որ եգիպտոս գնացած էր, այժմ վերադարձած է իր պաշտօնատեղ, տօնական օրերին մէջ իր ներկայութեամբ հոգևորապէս մխիթարելու համար կիպրոսի հայ ժողովուրդը։

ՔՕԼԷՐԱՆ ՎԱՆԻ ՄԷՋ

Վան քաղաքին մէջ ճարակող թեթև քօլէրաի ծաւալումն արգիլելու համար, հրամայուած է որ վանէն մեկնող ճանրորդները բժշկական քննութեան և հակաեխման ենթարկուին։

— Դեկտ. 31/13 յունուարին Վան քաղաքին մէջ քօլէրաի 1 դէպք պատահած է, բայց մահ չէ պատահած։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շնորհակալութեամբ ստացած ենք հետեւեալները.

Է. Ակնունի. Դէպի կռիւի (Հայկական վշտագրութեան մի էջ). Հրատարակութիւն Հայ Բեղ. Դաշնակցութեան «Դրօշակ»ի տպարան. 1904 Ժընեվ։ Երես 280։ Գին՝ 2 ֆրանգ. Ամերիկաի համար ½ տոլար։ Ստանալու համար դիմել Ժընեվ, «Դրօշակ»ի խմբագրութեան։

(Է. Ակնունին ծանօթ է արդէն իր «կովկասեան վէրքեր»ով որ այնքան հետաքրքրաշարժ և յուզիչ հրատարակութիւն մ՚եղաւ։ «Դէպի կռիւ»ը, որ կրնայ «կովկասեան վէրքեր»ի երկրորդ օղակը համարուիլ, վերին աստիճանի հետաքրքրութեամբ կը կարդացուի. անոր մէջ ամփոփուած են շատ մը փաստաթուղթեր և կարևոր տեղեկութիւններ Ռուսիոյ Հայ եկեղեցական կալուածներուն յափշտակութեան գործին նկատմամբ։ Ամէն Հայեր որոնք բնականապէս յուզուեցան ռուս բռնապետութեան այդ ահաւոր ճիրի դէմ որ երկար տարիներէ ի վեր հաւատարմութեամբ իրեն ծառայած իր հայ ժողովուրդի վրայ ի գործ կը դնէր, պիտի հետաքրքրուին անշուշտ կարդալ այս գիրքը, ուր ընդարձակօրէն պիտի գտնեն յիշեալ կալուածներուն յափշտակութեան պատմութիւնը, բռնապետութեան գաղտնի դաւադրութիւնները և Հայ ազգի բողոքագիրներն ու ռուս բռնապետութեան անողոք հրամանները։ Այս ամէնով մէկտեղ, «Դէպի կռիւը» բնաւ յուսահատացուներ, այլ իբր վերջաբան կոգևորէ պայքարը շարունակելու համար, իրաւունքի յաղթանակին համար յուսադրելով ապագային վրայ։)

*
* *

ՕՐԱՑՈՑՑ 1905 թուականի. պատի վրայ կախելու համար։ Սասունի վերջին կռուին մէջ նահատակուած 4 հերոսներու պատկերներովը զարդարուած է։ Գինն է 10 սէնդ։ Դիմել «Հայրենիք»ի խմբագրութեան
(27 Beach St., BOSTON, Mass. U. S. A.)

*
* *

ՍԻՈՒՆԱՆ Ազգային, Գրական եւ Բանասիրական ամսաթերթի Ա թիւը (1905 Յունուար) հրատարակուած է, որի բովանդակութիւնն է հետեւեալը.

Նաւակայքին մէջ (Նորավէպ) — Երուանդ Օրմանեան։ Այգեկութք մը — Հայկ Լեւոն։ Դրուագներ Զեթունի կեանքէն — Զէյթունցի։ Աչքերը (Բանաստեղծութիւն) — Սիւլլի Բրիւտոմ։ Ատ-

րիչէն — Բարսեղ Շահպազ։ Գրական մրցանակներ։ Երկուութիւն (վէպ Բօլ-Պուրժէ) Թարգմ. Ն. Ս.։ Եգիպտահայք — Ս. Բիւրատ։ Տխրութիւն։

Այն խիւթ մէջ առանձին հետաքրքրութեամբ մը կը կարդացուին «Զեթունի կեանքէն դրուագներ»ը և «Եգիպտահայք»ը։

«Սիսուան»ը լոյս պիտի տեսնէ ամէն ամսի սկիզբը։ Խմբագրական վարմինը կը կազմեն Ամբատ Բիւրատ և Երուանդ Օրմանքէշխանլեան։

Տարեկան բաժնեգինն է Եգիպտոսի համար 40 ղրշ. ոսկի, Ամերիկայի համար 2½ տոլր. և այլ տեղերի համար 12 ֆր.։

«Սիսուան»ի վերաբերեալ ամէն բանի համար դիմել հետեւեալ հասցէին.

M. M. Norhadian
Administrateur de la Revue «Siswan».
(Egypte) ALEXANDRIE

ԹԻՒՐՔԻԱ

Կ. պոլսի մէջ զրոյց կը պարտի Թէ սուլթանին կողմէն Մէքքէ ընծայներ տանող սրբազան կարաւանին վրայ յանկարծակի յարձակեր և գրաւեր են Պէտվի արաբներն որոնք մեծագումար փրկանք կը պահանջեն այժմ։

— Մամուրէդ-իւլ-Ազիզի (Խարբերդ) կուսակալ Հասան պէյը Կ. պոլիս կանչուած և Պեռլական խորհուրդի քաղաքային հիւղին անդամ նշանակուած լինելով, արտաքին գործերի պաշտօնատանի համարակալներէն Ֆէհմի պէյ, Մամուրէդ իւլ-Ազիզի կուսակալ անուանուած է։

— Այտընի վիլայէթին մէջ սոսկալի ողողումներ պատահած են. ամբողջ գիւղեր չորերին տակ անհետացած են։ Շատեր զոհուած են այդ ողողումներուն։ Սուլթանը հրամայեր է որ առանց անմիջական օգնութիւններ հասցունեն և յայտարեր է որ այդ նպատակով հանգանակութիւններ կատարուին։

— Նախարարական խորհուրդը 7/20 յունիսին արտասովոր նիստ մը ունեցաւ Եըլտըզ քէօշկի պալատին մէջ ուր ալմանացի խորհրդական Տ. Զանտէր ներկայացուց 100 միլիոնի նոր փոխառութեան մը համար ալմանական դրամատուներուն առաջարկները։ Իրազեկ անձնաւորութիւններ կը հաւաստեն Թէ Թիւրք կառավարութիւնն այդ փոխառութեան համար առաջարկուած ամէն խնդիրներուն ալ պիտի զիջանի ալմանական կառավարութեան ճնշման տակ, քանի Գերմանացի դրամատէրներուն խմբակին առաջարկած պայմաններն ուրիշներուն առաջարկածներէն նուազ չտհաւար կերեւին։

— Կ. պոլսէն կը հաղորդեն Թէ Թիւրք ևռուս պատերազմի տուգանքին համար Բ. Դրան կողմէն ռուս կառավարութեան վճարուելիք տարեկան 8 միլիոն ֆրանգի կարգադրութիւնն ապահովուած է։

— Նոր սպառազինութեան ծրագրին համեմատ լեռնային եւ պաշարման 700 թնդանօթ պիտի գնուի որոնք իրենց պիտոյքներով, ռազմամթերքներով և մանր մունր կազմածներով 4 միլիոն օսմ. լիրայի չափ ծախք մը կը պատճառեն։

— Սրուսաղէմի Ս. ուխտատեղիներէն Բեթլեհէմի մէջ ծնունդի գիշերը Լատիններն իրաւասութեան խնդիր մը յուզելով արգելք հանդիսացած էին Յոյներուն Թափօրի անցնելուն, որով կռիւ մը ծագած էր յունադաւաններուն և Լատիններուն միջև։ Թիւրք զօրքերը միջամտելով Յոյներուն իրաւունքը պաշտպանած եւ Թափօրին չրջագայութեան։

Այժմ Հռովմէն կիմացունեն «Էնֆօրմասիօն» լրագրին Թէ Կ. պոլսի իտալական և ալմանական դեսպանները Բ. Դրան դիմումներ ըրած են պահանջելով որ կաթոլիկ կրօնաւորներուն վրայ ձեռք բարձրացնող յունադաւան կրօնաւորները պատժուին։

Հռովմի և Պէրլինի կառավարութիւնները կուզեն ցոյց տալ Թէ ժամադիր են ջերմապէս պաշտպանել իրենց ազգակից կրօնաւորներն Արեւելքի մէջ։

ՄԱԿԵԴՈՆԻԱ

Վիէննայէն կը հաղորդեն յունուար 13 ին Թէ Պէրլինի դաշնագրին ստորագրող տէրութիւններն իմացուցին Բ. Դրան որ Թէ ինք չարունակէ իր ներկայ վարմունքը, իրենք ալ ազատ պիտի Թողուն պալքանեան տէրութիւնները Թիւրքիոյ վրայ յարձակելու։

— Սուլթանն իրատէով մը հրամայեր է Բ. Դրան որ Մակեդոնիոյ մէջ գինեալ ոստիկանութեան եւրոպացի սպաներուն Թիւը 60ի բարձրացնելու համար տէրութիւններուն ըրած պահանջն ընդունուի։

— Սալոնիկի եւրոպական հիւպատոսարանները տեղեկութիւն ստացան իրենց կառավարութիւններէ Թէ Մակեդոնիոյ գինեալ ոստիկանութեան եւրոպացի սպաներուն Թիւն աւելցունելու համար տէրութիւններուն պահանջը կարգադրուած է նպաստաւոր կերպով։

— Գէկրատէն կիմացունեն որ սերպ ժողովուրդը շատ գրգռուած է Սերպիացի Դասկօ քահանայի սպաննուելուն համար, որը Պուլկարներն սպաննած են Մակեդոնիոյ մէջ։ Գինեալ քահանայ մը քանի ամսէ ի վեր ժահի դատապարտուած էր պուլկար յեղափոխական կոմիտէի կողմէն։

— Սալոնիկէն կը հեռագրեն յունր. 17ին. «101 քօմիտաճիներ, որոնց 39ը հելլենահրպատակ, 34ը Մակեդոնացի Ցոյն եւ 28ը Պուլկար են, կռւի մը մէջ գերի բռնուելով. Սալոնիկ բերուած են սպանուելու համար։»

ՀԻՒՕՒՍԱՑԻՆ ՇՈՎԻ ՄԻՋԱԴԷՊԻՆ ԿՆՆԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

Հնդի ձկնորսներուն վրայ եղած յարձակման միջազգային քննիչ յանձնաժողովը յունր. 19ի հինգշաբթի օր իր հրապարակային առաջին նիստն ըրաւ արտաքին գործերի պաշտօնատան մէջ ուր ըրած էր նաև իր դադարկ նախորդ նիստերը։ Բազմաթիւ ականդիրներ կային որոնց մէջ էր նաև Բարիզի ճարտնական դեսպանատան առաջին քարտուղարը։

Տ. Օ'Պրիէն կարդաց անգլիական կառավարութեան տեղեկագիրն որ կը փաստաբանէր Թէ ռուսական երկրորդ նաւատորմիղը 1904 հոկտ. 21ի գիշերը յանկարծակի յարձակած էր Տօկրըի ապաղուստները ձուկ որսացող նաւերուն վրայ, որոնց մեծ Ճնաս պատճառած էր և մի քանի հոգի ալ սպաննուած էին, Թէեւ ո՛չ մշուշ կար այդ գիշեր և ո՛չ ալ մութ կը տիրէր. այլ ձկնորսական բոլոր նաւերը ալ իրենց լոյսեր վառած էին եւ իրենց ձկնորսական նաւեր լինելու նշաններն ալ յայտնապէս կերեւէին։

Այնուհետև Տ. Նէքլիւտով կարդաց ռուս կառավարութեան տեղեկագիրն որ կը փաստաբանէր Թէ տեղեկութիւններ ստացուած լինելով որ Ճարոնները պատրաստութիւններ տեսած են ռուսական երկրորդ նաւատորմիղը յանկարծակիի բերելով վրան յարձակելու և հոկտ. 21ի գիշերն ալ նոյնտեղ Ճարոնական կասկածելի մարտանաւեր նշմարած լինելով ռուսական նաւատորմիղը Թնդանօթներ արձակեր է անոնց վրայ որոնք խոյս տուեր են և դժբաղդաբար Թնդանօթի մի քանի հարուածներ ալ հանդիպեր են ձկնորսանաւերուն որոնք հոն կը գտնուէին։

Յանձնաժողովը երկու կողմին ալ երկար տեղեկագիրները լսելէն յետոյ, նիստը վերջացած հաւարեց, առանց վրայ վճռաբանութիւնը, վկայներու ունկնդրութիւնը կայլն Թողլով յաջորդ նիստերին։ Յունուար 23ի երկուշաբթի օր վերստին գումարուելով, վերջին նիստին մէջ իրեն յանձնուած տեղեկագիրներն սկսաւ քննութեան առնել։

ՄԱՆՈՒՅԱԿՄՆԵՐ

"ԱՐՄԷՆԻԱ„Ի ՅՈՒՇԱՐԱՐ

Շատեր կը փափագէին ունենալ Արմենիաի Ա տարեշրջանի (1885–86) Թիւերն որոնք հայկական խնդրին հայ գաղթականութիւնների ուշադրութեան առարկայ դառնալուն ըստկզբնական պատմութիւնը կը ներկայացունեն։ Բայց որովհետև այդ Թիւեր բոլորովին սպառած են, նոյն տարեշրջանի մէջ Մ. փորթուգալեանի գրած առաջնորդող յօդուածներէն 30ի չափ ամփոփուած են այս ծառարարի մէջ, մի քանի Թղթակցութիւններով մէկտեղ որոց մասին խօսուած է այդ առաջնորդող յօդուածների մէջ։

Որպէս զի Արմենիաի բարեկամները կարենան դիւրութեամբ տարածել Արմենիաի ծառարարն իրենց շրջանների մէջ, աժան մի գին նշանակուած է։

Արմենիաի ծառարարը իր յառաջաբանով մէկտեղ կը բաղկանայ 124 երեսներէ, ութածալ դիրքի վրայ տպագրուած։ Գինն է 1 ֆրանք և 40 սանթիմ։ Տարածելու համար 10 հատ մէկէն առնողին, փոխանակ 14 ֆրանքի, 10 ֆրանքով (2 տոլար) կը ղրկուի ապահովագրուած ծրարով։

Արժէքը կանխիկ չղրկուած ապտպ. բանքները չեն գործադրուիր։

ՇԷՔՍՊԻՐԻ ՀԱՄԼԷԴԸ

Շէքսպիրի ՀԱՄԼԷԴԸ որ արեւմտեան աշխարհաբար լեզուով հայերէնի Թարգմանած է քալ անգլիագէտ Տիար Գարեգին Ե. Փափազեան, կարելի է ստանալ նաև Արմենիաի խմբագրատունէն։

Տպագրուած է վիէննայի Մխիթարեանց տպարանը, մաքուր Թղթի վրայ և ունի մեծ ութածալ դիրքով 183+իԳ երես։

Գինն է 2 ֆրանգ և 50 սանթիմ։

Եղիազար Մուրատեան. ՀԻՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ա.ՐՇԱԿ Բ.ի և ԱՆՈՐ ՊԱՊ ՈՐԴՈՅՆ։ (Հայոց պատմութեան մէկ կարեւոր կէտին վրայ քննադատական տեսութիւն մ'է որի համար Մ. Ազաթէկեան գրած է Թէ «Հեղինակին այդ ձեռնարկութիւնը պատիւ է բերում իրան և այն ազգին, որին պատկանում է պատմութիւնը»)։ 2 ֆր.

Բակուրեան. ԿԻԼԻՔԻՈՍ ԿՂԶԻ (Ա. Բ. խարհագրական և պատմական տեսութիւն Բ. Հայ գաղթականութիւն) 1 ֆր.

Բանաստէրի հրատարակած գիրքը մեզ մօտ կը ծախուի Մարսէյլի մէջ միևնոյն գիներով ինչ որ Բարիզի մէջ «Բանաստէր»ի խմբագրատունը։

ՄԻ ՊՈՒԼԿԱՐ ՀԱՅՐԵՆԱՍԷՐԻ (ԶԱՔԱՐԻԱ ՍԹՈՒԱՆՈՎ)

ՖՐԱՆՍԵՐԷՆԷ ԹԱՐԳՄԱՆԵՑ
ՏԳՂՅՈՒՆ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
1894

Պուլկարիոյ անկախութեան տրոնաներէ մէկին, Զաքարիա Սթուանովի, որ իր ընդունակութեան շնորհով յաջողեցաւ մի լեռնաբնակ գիւղացի հովուի պարզ վիճակէն հետզհետէ արհեստաւոր, վարժապետ, քաղաքական գործիչ, խմբագրապետ և վերջապէս ազատ Պուլկարիոյ առաջին ժողովի նախագահ դառնալու համար հետաքրքրաշարժ կենսագրութիւնն է, ուր ուշադրութեան արժանի տեղեկութիւններ կան նաեւ Պուլկարիոյ Թիւրքի լուծէն ազատելու պատրաստող պուլկար հայրենասէր յեղափոխականներուն գործունէութեանց մասին։ Սկիզբը գրուած է նաեւ հեղինակին, Բրօֆէսէօր Լուի Լէժէի Թարգմանչին միջեւ եղած Թղթակցութիւնը այս գրքի հայերէն Թարգմանութեանն առթով։

Հեղինակը շատ իրաւամբ կը պարծի իր յառաջաբանի վերջ Թէ «Զաքարիա ժամանակ պիտի պատճառէ ինձ եթէ ես Թերցողներուն հետաքրքրութիւնը գիւղացիի այս վաւերական պատմութեան վրայ։»

Գինն է փոստի ծախքով մէկտեղ 1 ֆրանգ և 40 սանթիմ։

Տարածելու համար մեծ քանակութեամբ առնողներուն 25 % զեղչ կը լինի։

(Պարսկաստանի հայերուն համար 1 ֆրանգ է։

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐ

(Կ. ՊՕԼՍՈՑ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԷՆ ԱՌՆՈՒԱԾ ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

ԴՐՔՑ ԱԶԱՂԱՐԻՑ

Այս հետաքրքրաշարժ գրուածը ներկայացունէ ընտանեկան տիպ պատկերներէ մին ուր կը տեսնուի անբարոյական մի հայր իր տպատուած վարքուբարքով որչափ չարչարանքներ պատճառ դարձած է և վերջը վերջոյ ինք ալ իր որդու ձեռքէ սպաննուած և անհետացած է խարհէ։ Գինն 1 ֆրանգ։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Գ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

ՄԱՐՍԷԼ
Gérant : François CARRIÈRE
Marseille. — Imprimerie du Midi